# ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԱՀԵՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԳԱՎԱՌ - 2023

Հարցման արդյունքների վերլուծությունը կատարվել է  ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից,  2023թ. հուլիսի 6-ին:

**Որակի ապահովման բաժնի պատասխանատուներ՝**

Հայրապետյան Ք.

Նախրատյան Մ.

Մուրադյան Ն.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


I. Հարցման ընդհանուր նկարագիրը ........................................................3

II. Հարցման մեթոդաբանությունը ............................................................3

III. Գավառի պետական համալսարանում աշխատանքահեն ուսուցման իրականացման հնարավորությունների գնահատում....................................4

## I. Հարցման ընդհանուր նկարագիրը.

Գավառի պետական համալսարանում աշխատանքահեն ուսուցման իրականացման հնարավորությունները գնահատելու նպատակով Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ, Համալսարան) որակի ապահովման բաժնի կողմից գործատուների շրջանում իրականացվել է հարցում նախապես մշակված առցանց (online) անանուն հարցաթերթիկի միջոցով: Հարցումն իրականացվել է Համալսարանի անդամակցած՝ Եվրոպական Միության ‹‹ERASMUS+FLEXWBL›› ծրագրի շրջանակներում, նվիրված աշխատանքահեն կրթությանը:

## II. Հարցման մեթոդաբանությունը.

Հարցաթերթը բաղկացած է փակ, բաց և ինտերվալային հարցերից: Հարցաթերթի հարցերը մշակվել և կազմվել են ԳՊՀ որակի ապահովման, արտաքին կապերի և լրատվության բաժինների աշխատակիցների և Համալսարանի դասախոսների, ուսանողների համատեղ աշխատանքի արդյունքում: Հարցաթերթի նպատակն է քանակական և որակական տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը, որը միտված է ԳՊՀ-ում կրթության որակի բարձրացմանը և աշխատաշուկայի պահանջներին բավարարող, գործնական աշխատանքի կարողություններ ունեցող մասնագետների պատրաստմանը:

## III. Գավառի պետական համալսարանում աշխատանքաhեն ուսուցման իրականացման հնարավորությունների գնահատում

Գավառի պետական համալսարանում աշխատանքաhեն ուսուցման իրականացման հնարավորությունների գնահատման վերաբերյալ հարցմանը մասնակցել են թվով 31 գործատուներ.

1. Գավառի համայնքապետարան,
2. «Սարվոր տուրիզմ» ՀԿ,
3. «Luseen Technologies« ՏՏ զարգացման հիմնադրամը,
4. Գավառի Ավ. Իսահակյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց,
5. «Շահ» ուսումնական կենտրոն,
6. «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ «Գեղարքունիք մասնաճյուղ»,
7. «Արարատբանկ»  ԲԲԸ,
8. «Արարատբանկ»  Սևան մասնաճյուղ,
9. «Յունիբանկ» ԲԲԸ Գավառ մասնաճյուղ,
10. «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Գավառ մասնաճյուղ,
11. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Գավառ մասնաճյուղ,
12. .«Սեֆ Ինտերնեյշնլ» ՈւՎԿ ՍՊԸ,

Հարցմանը մասնակից գործատուները հիմնականում ներկայացնում են Գեղարքունիքի մարզի աշխատաշուկան՝ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, ՏՏ զարգացման հիմնադրամ, դպրոց,  բանկեր, այլ կազմակերպություններ, ինչը ևս մեկ անգամ վկայում է, որ Գավառի պետական համալսարանը՝ որպես Գեղարքունիքի մարզում գործող միակ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն, իր հնգամյա (2023-2027 թթ.) ռազմավարական ծրագրում ամրագրված առաքելությանը հավատարիմ, բակալավրի և մագիստրոսի որակավորմամբ մրցունակ մասնագետների պատրաստումը կազմակերպում է մարզի առանձնահատկությունների և աշխատաշուկայի պահանջների հաշվառմամբ և հաջողությամբ լուծում մասնագետների պատրաստման խնդիրը:

**1. Ի՞նչ ենք հասկանում «աշխատանքահեն» ուսուցում ասելով:**

Հարցվողները հիմնականում տվել են հետևյալ պատասխանները.

1. Աշխատանքի և ուսուցման գործընթացի համադրում:
2. Նոր հմտությունների և կարողությունների ձևավորման շարունակական գործընթաց:
3. Կրթությանը զուգահեռ աշխատելու հնարավորություն:
4. Ուսման ընթացքում համաժամանակյա աշխատանք:
5. Գործատուի կողմից վճարվող պրակտիկաների անցկացում:

**2. Ի՞նչ առավելություններ և թերություններ կարող է ունենալ աշխատանքահեն ուսուցումը:**

**Առավելություններ**

1. Համապատասխան կադրերի վերապատրաստում:
2. Հիանալի աշխատակազմի ձևավորման հնարավորություն:
3. Ուսանողների կողմից մասնագիտական նոր գիտելիքների ձեռքբերում:
4. Պոտենցիալ կադրերի վերապատրաստումը ընկերության հաջողության գրավականը կարող է լինել:
5. Ուսանողների ներկայությունը կազմակերպությունում կնպաստի անձնակազմի աշխատունակության, մրցակցության բարձրացմանը:
6. Վճարովի պրակտիաները կնպաստեն ուսանողի ֆինանսական կայունությանը:

**Թերություններ**

1. Ուսանողը՝ որպես աշխատակից, աշխատանքային պարտականություննները կարող է լավ չկատարել:
2. Դեռևս որակավորում չստացած ուսանողը դեռևսպ պատրաստ չէ աշխատանքին:
3. Ուսանողի տարիքային առանձնահատկություններից ելնելով՝ կարող է գերծանրաբեռնվածությունը վատ ազդել նրա առողջության:

4. Ֆինանսական ազատությունը կարող է բացասաբար անդրադառնալ ուսանողի առաջադիմության վրա:
5. Գործատուները ոչ միշտ են պատրաստակամ վճարելու պրակտիկանտ ուսանողին:
6. Կազմակերպությունները ֆինանսապան ավելորդ բեռ են ունենալու:

**3. Գնահատել աշխատանքահեն ուսուցման դերը և պահանջը բարձրագույն կրթության համակարգում:**




Հարցվողների 35%-ը նշել է գերազանց պատասխանը՝ այսինքն կարծում են, որ աշխատանքահեն ուսուցումը խիստ պահանջված է այժմեական բուհական կրթական համակարգում, 25%-ը նշել է լավ պատասխանը, 28%-ը նշել է բավարար պատասխանը, այսինքն դեռևս հստակ չեն պատկերացնում, թե ինչ է աշխատանքահեն ուսուցումը, կամ գտնում են, որ ՀՀ-ում աշխատանքահեն ուսուցման շրջանակի ներդրումը հղի է մի շարք մարտահրավերներով, որոնց հաղթահարում հետևողական աշխատանք և ժամանակ կպահանջի, 12%-ը՝ անբավարար պատասխանը, քանի որ դեռևս պատրաստ չեն կրելու նման ֆինանսական բեռ:

**4. Ձեր կարծիքով որո՞նք են աշխատանքահեն ուսուցման իրականացման ձևերն ու հնարավորությունները:**

Հարցվողների մեծ մասը ներկայացրել է հետևյալ պատասխաններ՝

1. Մասնագիտական կրթական ծրագրերի վերանայելի գործատուների առաջարկությունների և կարծիքների հաշվառում:
2. Ուսումնական պլանի վերանայում և համապատասխանեցում աշխատանքահեն ուսուցման շրջանակին:
3. Համապատասխան դասախոսների ներգրավում, որոնց դասընթացների ելքային արդյունքներում առաջնային կլինեն գործնական հմտությունները:
4. Բուհական դասընթացների ծրագրերի իրազեկությունների վերանայում՝ գործնական հմտությունների կարևորում:
5. Ուսումնական պլանում դասընթացի համար նախատեսված գործնական ժամերի ավելացում:

**5. ԳՊՀ-ում աշխատանքահեն ուսուցմամբ ի՞նչ մասնագիտական կրթական ծրագրեր կցանկանայիք, որ իրականացվեր:**

Հարցվողները առաջնահերթություն են տվել հետևյալ մասնագիտական կրթական ծրագրերին.

1. Համակարգչային ճարտարագիտություն
2. Ֆինանսներ /ըստ ոլորտի/
3. Տնտեսագիտություն
4. Տարրական մանկավարժություն և մեթոդիկա
5. Իրավագիտություն
6. Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/
7. Դեղագործական քիմիա
8. Պատմություն
9. Անգլերեն լեզու և գրականություն

**6. Աշխատանքահեն ուսուցման իրականացումը ի՞նչով կնպաստի ուսանողի՝ որպես մասանագետի կայացմանը.**




Հարցվողները կարող էին միաժամանակ ընտրել մի քանի պատասխաններ: Արդյունքում՝ 45%-ը ընտրել է «Ուսումնառության արդյունավետության ապահովում» տարբերակը, 32%-ը՝ «Աշխատանքային կոնֆլիկտների բացառում», 58%-ը՝ «Գործնական նոր հմտությունների ձևավորում», 52%-ը՝ «Տեսական գիտելիքների իմացություն», 40%-ը՝ «Թիմում աշխատելու կարողությունների ձևավորում», 35%-ը՝ «Ոլորտի իրավական ակտերի և օրենքների իմացություն», 60%-ը՝ «Համակարգչային հմտություններ», 7%-ը՝ «Օտար լեզուների իմացություն»:

**7. Ներկայացրեք Ձեր առաջարկություններն աշխատանքահեն ուսուցումը ԳՊՀ-ում արդյունավետ իրականացնելու վերաբերյալ:**

Հարցվողները հիմնականում ներկայացրել են հետևյալ առաջարկությունները.

1. Ուսումնական պլանների վերանայում:
2. Գործատուների հետ նոր համաձայնագրերի, պայմանագրերի կնքում:
3. Գործատուների հետ համատեղ քննարկումների կազմակերպում, իրազեկում, թե ինչ է աշխատանքահեն ուսուցումը:
4. Գործատուներին եվրոպական գործընկեր բուհերի նշված ոլորտում առաջավոր փորձի ներկայացում, շրջանակի ներդրման հնարավորությունների քննարկում:

## IV. Եզրակացություններ և առաջարկություններ.

Ամփոփելով հարցման արդյունքները՝ կարող ենք նշել, որ հարցմանը մասնակցել է թվով 12 գործատու՝ հիմնականում Գեղարքունիքի մարզից:

Հարցման արդյունքները ցույց տվեցին, որ հարցվողները «աշխատանքահեն» ուսուցում ասելով հիմնականում հասկանում են.

1. Նոր հմտությունների և կարողությունների ձևավորման շարունակական գործընթաց:
2. Գործատուի կողմից վճարվող պրակտիկաների անցկացում:

**«Ի՞նչ առավելություններ և թերություններ կարող է ունենալ աշխատանքահեն ուսուցումը»** հարցին ի պատասխան հարցվողների մեծամասնությունը, ի թիվս աշխատանքահեն ուսուցման բազում առավելությունների, նշել են նաև թերություններ, որոնց ուղղման նպատակով առաջարկում են.

1. Ուսումնական պլանների վերանայում:
2. Գործատուների հետ համատեղ քննարկումների կազմակերպում, իրազեկում, թե ինչ է աշխատանքահեն ուսուցումը:
3. Գործատուներին եվրոպական գործընկեր բուհերի նշված ոլորտում առաջավոր փորձի ներկայացում, շրջանակի ներդրման հնարավորությունների քննարկում:

ԳՊՀ որակի ապահովման բաժինը, հարցման արդյունքները քննարկելով Արտաքին կապերի և լրատվության բաժնի աշխատակիցների հետ, առաջարկում է կարևորել ուսանողների առաջարկությունները՝ Համալսարանում աշխատանքահեն ուսուցման շրջանակը ներդնելու և իրականացնելու գործընթացում, այդ նպատակով օգտագործելով Համալսարանի անդամակցած՝ Եվրոպական Միության ‹‹ERASMUS+FLEXWBL›› ծրագրի արդյունքները, ծրագրի անդամ եվրոպական բուհերի հաջողված փորձը: